

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՐԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԿ-ՄԱԾՁԲ-21/05**

ք. Երևան

29 հունվարի 2021թ.

Կարաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լայն տեխ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Սաֆարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է հերթի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

23. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7000000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձևով բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
h/h 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար
Ա. Թովմասյան
/ստորագրություն/
Վ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՅՍ ՏԵԼ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Այգեձորի փ. 692, 27 բն.
Բանկ՝ «Ընելկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050622003451001
ՀՎՀՀ 00256628

Տնօրեն՝ Գ. Մախարյան
/ստորագրություն/
Վ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	72221130/1		դրամ	7000000	1	ներկայացված է ստորև	պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2021թ

Աշխատակիցների արդյունավետությունը և հաճախորդների սպասարկման որակը վերահսկող համակարգ

Համակարգի ներդրման նպատակը՝ վերահսկել և բարձրացնել հաճախորդների սպասարկումն իրականացնող աշխատակիցների արդյունավետությունը, բարելավել սպասարկման որակը, ապահովելով հաճախորդների հոսքերի հավասարաչափ բաշխումը:

Համակարգը պետք է բաղկացած լինի հետևյալ կոմպոնենտներից.

- Աշխատակիցների կողմից իրականացվող սպասարկման գործընթացի վերահսկումն իրականացնող ծրագրային ապահովում;
- Աշխատակիցների կողմից սպասարկված հաճախորդների քանակի, սպասարկման տևողության մասին և աշխատակիցների արդյունավետությունը չափող այլ հաշվետվություններ գեներացնող ծրագրային ապահովում;
- Ծրագրային ապահովում, որը կիրականացնի հաճախորդների հոսքի հավասարաչափ բաշխումը աշխատակիցների միջև, բացառելով աշխատակիցների պարապուրդը և անհամաչափ ծանրաբեռնվածությունը;
- Քաղաքացիների կողմից սպասարկում ստանալու համար նախապես գրանցվելու համար բջջային հավելված:

Աշխատակիցների կողմից իրականացվող սպասարկման գործընթացի վերահսկումն ապահովող ծրագրային ապահովումը պետք է սպասարկման բաժնի ղեկավարությանը հնարավորություն ընձեռի.

- Սահմանել աշխատակիցների արդյունավետությունը չափող (օր.՝ սպասարկման տևողություն ըստ ծառայությունների) նորմատիվներ
- Առցանց հետևել աշխատակիցների կողմից ներկա պահին իրականացվող սպասարկման գործընթացին, տեսնելով աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և պարապուրդում լինելը;
- Տեսնել այդ պահին համակարգում գրանցված բոլոր կտրոնների մանրամասները;
- Տեսնել աշխատակիցների նորմատիվներից շեղման պատճառով (օր.՝ սահմանվածից երկար սպասարկման տևողություն) կամ ծանրաբեռնվածության հետևանքով ծագած խնդիրները և համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Հաշվետվությունների գեներացման ծրագրային ապահովումը պետք է հնարավորություն ունենա.

- Գեներացնել աշխատակիցների արդյունավետությունը չափող և սպասարկման գործընթացի տարբեր ասպեկտներին վերաբերվող հաշվետվություններ;
- Գեներացնել հաշվետվությունները ցանկացած ժամանակահատվածի համար;

- Հաշվարկել աշխատակիցների արդյունավետությունը բարձրացնելու և սպասարկման որակը բարելավման համար կարևորագույն ցուցանիշները, օր.՝ քաղաքացիների սպասման միջին տևողություն, աշխատակիցների սպասարկման միջին տևողություն և այլն;
- Ապահովել գեներացված հաշվետվությունների արտահանումը .xlsx ֆորմատով;

Հոսքերը բաշխող ծրագրային ապահովումը պետք է ունենա հետևյալ հնարավորությունները.

- Սպասարկման սրահում տեղադրված տերմինալի միջոցով հաճախորդը պետք է հնարավորություն ունենա ընտրել ծառայությունը և հերթագրվել, ստանալով հերթական համար պարունակող կտրոն;
- Կտրոն տրամադրող տերմինալի ինտերֆեյսում պետք է հնարավորություն լինի տեղադրել տարատեսակ կոճակներ և ենթակոճակներ, ինչպես նաև դրանք օպտիմալ կերպով դասավորել էկրանին;
- Սպասարկման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար նախատեսված ծրագիրը պետք է համատեղելի լինի աշխատակիցների մոտ առկա համակարգիչների հետ և աշխատակիցներին ընձեռի հետևյալ հնարավորությունները.
 - Կանչել հերթում գտնվող հաճախորդին՝ ծրագրով սահմանված հաջորդականությամբ;
 - Նշել ծրագրի մեջ, ինչ ծառայություն է մատուցում հաճախորդին;
 - Վերահասցեավորել հաճախորդին այլ աշխատակցի մոտ ըստ անհրաժեշտության;
 - հետաձգել հաճախորդի սպասարկումը, հետաձգելով կտրոնը համակարգում
- Սպասարկման համար կանչվող հաճախորդների կտրոնների հերթական համարները պետք է արտացոլվեն սպասարկման սրահում տեղադրված հեռուստացույցների վրա՝ ուշադրություն գրավող ձայնային ազդանշանով:

Սպասարկման գործընթացը և աշխատողների արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև հաճախորդների հերթերում սպասելաժամանակը կրճատելու համար համակարգը պետք է ունենա բջջային հավելվածի միջոցով նախօրոք գրանցման հնարավորություն, որն իր հերթին պետք է ունենա.

- Մասնաճյուղի ընտրության հնարավորություն;
- Մոտակա մասնաճյուղը տեսնելու հնարավորություն;
- Քաղաքացուն անհրաժեշտ ծառայության ընտրության հնարավորություն՝ հիմնվելով մասնաճյուղում առկա հերթերի կառավարման համակարգի էկրանի մեկուկ վրա;
- Սպասարկման համար քաղաքացուն հարմար օրվա և ժամի ընտրության հնարավորություն;
- Ուշանալու դեպքում կտրոնի սպասարկման հետաձգման հնարավորություն;

Համակարգի սպասարկման ծառայությունները պետք է ներառեն.

1. Երեք ամիսը մեկ անգամ
 - Կառավարման համակարգի կայանների և սարքավորումների մաքրման աշխատանքներ
 - Տերմոսպիչի սպասարկում
 - Սենսորային մոնիտորի սպասարկում և անխափան աշխատանքն սպահովող քայլերի ձեռնարկում
2. Սերվերային համակարգերի ընթացիկ սպասարկում, իսկ խափանման դեպքում վերականգնում եռօրյա ժամկետում
3. Գրասենյակների աշխատակիցների տվյալների փոփոխում
4. Մատուցվող ծառայությունների ցանկի փոփոխում
5. Օգտվող անձնակազմի համակարգից դուրս գալու պատճառների ցանկի փոփոխում
6. Սարքերի խափանումների դեպքում պետք է իրականացվի սարքերի նորոգում, իսկ չվերականգնվող սարքերը պետք է փոխարինվեն նորով Երևան քաղաքում 36, իսկ մարզերում 48 ժամվա ընթացքում
7. Սպասարկման գրասենյակներին պետք է ապահովվել տերմոսպիչի համար նախատեսված թղթերով
8. Սպասարկող ընկերությունը պետք է ունենա թե՛ գիծ, ամսվա բոլոր աշխատանքային օրերին
9. Համակարգի սպասարկման ծառայությունները իրականացվելու են հետևյալ հասցեներում՝
 - Արարկիր սպասարկման գրասենյակ – ք. Երևան, Կոմիտաս պող. թիվ 35/2
 - Կենտրոն սպասարկման գրասենյակ – ք. Երևան, Բյուզանդի 1/3

- Շենգավիր սպասարկման գրասենյակ – ք. Երևան, Մանանդյան 33
- Աբովյան սպասարկման գրասենյակ – ք. Աբովյան, Բարեկամության 2
- Մարտունի սպասարկման գրասենյակ – ք. Մարտունի, Գ. Նժդեհի 3
- Վաղարշապատ սպասարկման գրասենյակ – ք. Էջմիածին, Մաշտոցի 1
- Աշտարակ սպասարկման գրասենյակ – ք. Աշտարակ, Ն.Աշտարակեցու 4
- Գյումրի սպասարկման գրասենյակ – ք. Գյումրի, Աբովյան 248
- Գավառ սպասարկման գրասենյակ – ք. Գավառ, Բունիայան 1/2
- Վանաձոր սպասարկման գրասենյակ – ք. Վանաձոր, Ուսանողական 10
- Արմավիր սպասարկման գրասենյակ – ք. Արմավիր, Հանրապետության 6

ՊԱՏՎԻՐՍՈՒ

Կադաստրի կոմիտե
 Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
 հ/հ 900011030815
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 ՀՎՀՀ 02534328

/Գլխավոր քարտուղար
 Ա. Թովմասյան

/ստորագրություն/
 Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՅՄ ՏԵԽ» ՍՊԸ
 Հասցե՝ ք. Երևան, Այգեձորի փ. 69Չ. 27 բն.
 Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 2050622003451001
 ՀՎՀՀ 00256628

Տնօրեն

Գ. Մաֆարյան

/ստորագրություն/
 Կ.Տ.



Handwritten signature in blue ink.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72221130/1	տվյալների ցանցի կառավարման ծառայություններ	583000	1160000	174966	2332000	2915000	3498000	4081000	4664000	5247000	5830000	6413000	7000000	7000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
h/h 900011030815
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար
Ա. Թովմասյան

/ստորագրություն/
Կ.Տ.



ԿԱՏԱՐՈՂ

«ԼԱՅՄ ՏԵԽ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Այգեձորի փ. 69շ. 27 բն.
Բանկ՝ «Ինտելոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050622003451001
ՀՎՀՀ 00256628

Տնօրեն Գ. Մաֆարյան
/ստորագրություն/
Կ.Տ.



Handwritten signature

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն